

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար

ճարեկան Գրք. 10


վեցամսեայ " 5

Արտասահման

ճարեկան Գրք. 12

վեցամսեայ " 6

ԿԱՆԻՍԻԿ



Գրութիւնք եւ չեն
տրուիր:

Հասցե

DIRAN PAPAZIAN

RUE DRAGOMAN

K. STEPAN

BULGARIE) VARNA

ՀԱՐԱԹԱՅԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԽԵԾՏԱԿԱՆ

Երէ կ'ուզեմք «Հայեղի»ին մեջ աղոր աերեւանայ,

Պարսիք սիրուն եւ ազնիւ դէմք մը ունենալը

ԱԶԳԱՅԻՆ

ԹՂԹԱՅՈՒԹԻԻՆ

14 Յունիս Գ. Պուլիս

Փիլիպպի մէջ պատահած վերջին խռովութիւնները բաւական սուղի նշան տան: Տարիէ մը ի վեր ազգային դժգոյցները երեսանկ վիճակ մը ունին. շատ հայեր իրենց զաւկները, ազգին ապագայ յոյսերը ստիպուած են օտար դժգոյցներ զրկել ու ոմանք ալ տանը մէջ կը պահեն: Ուսումնասիրահի օրիորդները Հոգեգալստեան կիրակի օրը, փոխանակ Հայաստանեայց եկեղեցիին պատարագին ներկայ գտնուելու, իրենց աշակերտուհիները առած բողոքականեարտըմեանի սրահը փայլեցնել փութացած էին: Չարժեք բարենիչ մը տալ այդ օրիորդներուն:

Այս շաբթու Պուլէն եկած մէկ երկու վստահելի և պատուաւոր անձինքներէ ալ ստուգեցինք թէ, արգարեւ Համբարձման տօնին օրը Սամաթիոյ եկեղեցւոյն դրանը վրայ փակցուեր է

յեղափոխական կոչ մը, այս բանը բնորոշները հետեւեալ չորս սրիկա երն են եղեր. Արթաքի Ասլանեան, տէլլալ Գառնիկ, Լեոն Զատիկեան և Խաչիկ Ապահունի: Ասանք միաբանելով կնիք կեղծեր ու վերոյիշեալ կոչը փակցուցեր են, որպէս զի ոստիկանութիւնը խաբելով՝ քիչ շատ կարողութիւն ունեցող հայերը ձերբակալուին ու զանոնք ազատելու պատրուակալ իրենք (այդ խափելի ոգրիկաները) բաժնարկեալներու ընտանիքներէն դրամ շորթեն: Հիմա այս գարշիկները բանտարկուած ու խիտ քննութեան ենթարկուած են, և կըսուի թէ հեռաւոր վայրեր պիտի աքսորուին: Արթաքի Ասլանեան ըստածը այն զրպարտիչ շունն է եղեր, որ պատճառեղած է քիչ շատ դիրքի տէր եղող ազնիւ երիտասարդի մը տարիէ մը ի վեր բանտարկուելուն:

Մուշի և Բաղէշի խլրտումներու մասին եղած տարաձայնութիւնք ալ ճիշդ են. Մուշի կառավարիչը որ յանձաւոր ճանչցուած է, Պուլիս տարուած է ուր պիտի դատուի՝ եթէ սակայն վրայ մարդ չի գայ:

ՀԱՅՈՐԴԻ

Ռուսահայի ոճիրը

Անցեալ կիրակի գիշեր ժամը 9ին Ռուսճուրի Հայ վաճառատան մը Սեփա-տացի բեռնակիրը շուկային մէջ իր Պուլկար հոմանիին հանդիպելով, զայն գետին կը տապալէ և մէջքէն դանակը քաշելով կը սկսի վիշը կտրել, սա պատ-ճառաւ որ այդ կիւնը խաբէութեամբ ա-նոր 30 ոսկին առած է եղեր:

Կնոջ աղաղակէն ոտորկանք վը հաս-նին, վիրաւորեալը հիւանդանոց և ոճ-րագործն ալ ի բանտ կառաջնորդեն:

Արկած

Անցեալ ուրբաթ օր ալ Լոմի կող-մը շինուելու վրայ ելող երկաթուղիի գծին երկաթները կրող վակօնին չըղ-թան զառիվերի մը վրայ կոտրելով, կսկսի ուժգնութեամբ դէպի ետ երթալ, այն միջոցին ճամբուն վրայ աշխատող 30ի չափ գաւառացի ազգայինք յան-կարծակիի եկած, ինքզինքնին Դանու-բը նետելով կազաանն, բայց դժբախ-տաբար անոնցմէ երեքը չկրնալով փախ-չիլ, վակօնին տակը կը մնան, որոնց եր-կուքը անմիջապէս կը մեռնին իսկ եր-րորդին ալ ձախ թեւ կը կտորի:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Տիար Գաբրիէլ Ս. Թօգատլեան և աղ-գականք իրենց շնորհակալքը կը յայտնեն այն ամեն բարեկամաց, որոնք ներկայ գտնուելով ողբացեալ Տիկին Երանուհի Ս. Թօգատլեանի յուղարկաւորութեան հանդէսին, այս առ-թիւ իրենց ցաւակցութիւնը արտայայտեցին:

Փ. Պոլիս 12 Յունիս 1899

(Այսօրուան թղթաբեր)

Ազգ. Հիւանդանոցի Տիկնանց Խը-նամակալութեան և Հոմ գպրոցի նախ-կին աշակերտուհեաց նախաձեռնու-թեամբ ՚ի նպաստ Հիւանդանոցի փե-տըրվար 21ին տրուած նուագահանդէ-սին զուտ հասոյթը եղած է՝ 625 ոսկի:

— Տիկին Էլիզա Խօրասանճեան նը-պաստից Յանձնաժողովին ներկայանա-լով՝ Վանայ կաթոլիկ որբանոցէն Վա-րագայ որբանոցը ընդունուած որբերուն

մէկուն պաշտպանութիւնը ստանձնելու փափագ յայտնած ըլլալով, ժողովը գո-հութեամբ ընդունեց այս ինքնաբերա-ռաջարկը:

— Ի նպաստ Վանայ սովելոց Արդու ինէն 23. Ամերիկայի Ուսթրի ազգայնոց մէջ եղած հանգանակութենէն 120 եւ Օր-տուէն 2 ոսկի շրկուեր է ՚ի Պատրիար-քարան:

ԲԱՑ ՆԱՄԱԿ

«Անահիտ»ի խմբագրութեան

«Ձեր հանդէսին յունիսի թուոյն մէջ Մուշէս խորագրով յօդուածին մէկ քա-նի պարբերութիւնները ամեն ողջամիտ անձերու հետ մեր վրայ ալ շատ դէշ տպաւորութիւն մը թողուցին: Արդեօք նորութիւն մը ցոյց տալու համար հիւ-լընկալեցիք այդ պարբերութիւնները, որք ժողովուրդի մը բարոյականին առաջ նորոգելու պաշտօնն ու պարտականու-թիւնը ունեցող և ոչ մէկ թերթի մէջ պէտք չէ որ տեսնուին: Իսկ եթէ ա-ռանց կանխաւ լուրջ քննութենէ մը անցնելու այն յօդուածը հրատարակու-թեան տուած էք, չարաչար մեղանշած էք ձեր պաշտօնին դէմ: Պէտք է գիտ-նալ թէ, այդ տեսակ նկարագրութիւն-ները մինակ գարեջրատան ու շանթօզ-ներու մէջ ապրող մոլիկները չեն կար-դար, այլ, ընտանիքներ, օրիորդներ, երիտասարդներ, պատանիներ և մինչև իսկ վարժարանի ուսանողներ:

Յօդուածին նոյն պարբերութիւն-ները մարդ չի համարձակիր երկու ե-րեք անձի ներկայութեանը պատմելու, ուր կը մնայ մամուլի միջոցաւ հրապա-րակ նետելու:

Կը ցաւինք որ, տաք կլիմայի մէջ ապրող օտարի մը ամենակեցողոտ և ամե-նաստորին դատակարգին անբարոյակա-նութիւններուն արձագանգ հանդիսա-ցած էր ձեր հանդէսը:

Աղատութիւնը իր բարոյականսահ-մանին մէջ գործածելու ենք:

Վահրամ Գրիգոր

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայկական Կրթարանի տարեկան հրապարակային քննութիւնները պիտի սկսին վաղը, կիրակի, 20 յունիս և վերջնան յաջորդ կիրակի, 27 յունիս:

Քննութիւնները կը կատարուին ամէն օր, առաւօտները ժամը 10—12, իսկ կէս օրէ վերջ 2—5:

Ձեռագործները և գծագրութիւնները ի տես դրուած են:

Ամէն ազգային ազատ է ներկայ գտնուիլ քննութեանց:

Փափաքողներու կը շրկուին տալուած ժամանակացոյցեր:

Վասնա Հիմնադիր—Տնօրէն
19 յունիս ԿՐՕՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

ՀԱՇՈՒՆ ՅՈՅՑ

Ի ՆՊԱՍ

Տ. Յ. Չափրեանի տրուած ներկայացման

Մոտք	Ֆր.
Ծախուած տոմսակներէ	220
Նուիրեց Տիար Ա. Ա.	10
" " Պ. Փ.	10
" " Խ. Տ.	10
	250
Ելք	
Դերասանուհիին վճարուած	22
Ձգեստներու վարձք	10, 5
Թատերասրահի վարձք	25
Տոմսակ և ազգերու տպագրութեան	3
Այլ և այլ ծախք	8
Տ. Չափրեանի յանձնուած	181, 5
	250

Յանուն Տիար Յ. Չափրեանի, անհուն շնորհակալութիւն կը յայտենք թէ վառնայի անձնուէր երիտասարդաց և թէ ամէն անոնց, որք կամեցան օժանդակել իրեն այդ տկար ու հիւանդագին վիճակին մէջ, իրենց աշխատութեամբ և գրամով:

ՉԳՕՆԵԱՆ


Հրատարակուեցաւ Տօթ. Ն. Տաղաւարեանի «Առողջապահութիւն Ծննդական գործարանաց» պատկերազարդ գործը: Դիմել Չարպանէլեան գրատունը:

Ռուստուքի վարժարանաց տարեկան հալոցաքննութիւնը պիտի սկսին ամսոյս 20ին. իւրաքանչիւր աշակերտի հալոցաքննութիւնը առաջուց որոշուած և ցուցակները պատրաստուած են: Չեւք անցուցած ըլլալով անոնցմէ մին, ընդ գրոյս կը դրկեմ «Հայկերի խմբագրութեան», խնդրելով որ բարեհաճի առաջիկայ թուոյն մէջ հրատարակել, առ ի գիտութիւն հալոցաքննութեանց ներկայ գտնուելիք անձնաւորութեանց:

Վնուանք	Վշակերաց.	Հայերէն	Ընթերց.	Կրօնագիտութիւն	Ազգ. գաղութիւն	Ֆրանսերէն	Պուրկարերէն
Միտք Գրանկերկեան	Թաթուլի քալաճօշը	Թաթուլի քալաճօշը	Թաթուլի քալաճօշը	Թաթուլի քալաճօշը	Թաթուլի քալաճօշը	Թաթուլի քալաճօշը	Թաթուլի քալաճօշը
Միլիտի Կիւմիւշեան	Մեղու և ճանճ	Մեղու և ճանճ	Մեղու և ճանճ	Մեղու և ճանճ	Մեղու և ճանճ	Մեղու և ճանճ	Մեղու և ճանճ
Անդրանիկ Պէյլեան	Թեքմաշ աւել	Թեքմաշ աւել	Թեքմաշ աւել	Թեքմաշ աւել	Թեքմաշ աւել	Թեքմաշ աւել	Թեքմաշ աւել
Վարդան Միքայէլեան	Կապիկք	Կապիկք	Կապիկք	Կապիկք	Կապիկք	Կապիկք	Կապիկք
Ռուբէն Ալթունեան	Ծխական ժողովուրդ	Ծխական ժողովուրդ	Ծխական ժողովուրդ	Ծխական ժողովուրդ	Ծխական ժողովուրդ	Ծխական ժողովուրդ	Ծխական ժողովուրդ
Գեղամ Կարապետ	Կիւն և Տաղաւար	Կիւն և Տաղաւար	Կիւն և Տաղաւար	Կիւն և Տաղաւար	Կիւն և Տաղաւար	Կիւն և Տաղաւար	Կիւն և Տաղաւար

Այս ցուցակը կը վերաբերի Ա. դասարանին, (թուաբանութիւն չափի հալոցութիւնը): Ըսին թէ ասոր նման ցուցակներ պատրաստուած են Պ. կարգին, Բ. դասարանին կամ բարձրագոյն կարգին համար ալ, բայց տակաւին չի կցցնք ձեռք: ՊԻՏԱԿ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱԿ



ՈՒՂՏԵՐ

Տատիկոնին (երեւելի Հայ ուղտապան Անատոլուի կարաւանին) մահուան օրը կը հասնի: Երեւելի մահը չէր՝ անդէնի ահնէր որ ազ մարդուն սիրտը տակնուվերայ կը նէր: Ուստի Մահը Տատիկոնին ըսաւ. «Է՛հ, ի՞նչ ընեմ, բուկին ալ հոգիդ պոնելու հըրամանն առի Աստուած պապաւն. ի՞նչ կըրնամ ընել քեզ որ ինծի շատ մը բարիք ես ըրած. երբ ասոր անոր հոգինները կ'առնէի, կը շալկէի, հոս ու հոն կերթայի, կը յոգնէի» — զի ո՞ր ամենաուժեղ արարածը չի յոգնիր անանկ ծանր բեռան մը տակ՝ որոյ մեծագոյն մասը մեղաց հակեր (պաղեսա) եւ. — ուղտերուդ կրնակը կը ցատկէի, հանդիստ բէֆ մը կընէի: Օր մը օրանց գոնէ ինծի ֆըշի մ'ալ ըսէի: Այս բարիքիդ գէմ կուզեմ ես ալ քեզի բարիք մը ընել. ահա եւթըն օր քեզի մեղացիք, ա՛ն ամենէն հիշալովիւն եւ այնպէս ըրէ անդէնը ճամբորդութիւն »:

Տատիկոն զայս լսելուն պէս՝ կը վաղէ գունդ գրացին կը կանչէ.

«Հէլա՛լ արէք իմ աղբըրտիք,
Ձեր կերել եմ աղն ու հացիկ.
Հէլա՛լ արէք իմ աղբըրտիք,
Անդէնի եմ ուղեորիկ »:

Այսպէս շատ խօսեցաւ քիչ խօսեցաւ՝ ամենէն ալ հէլալն առաւ, բայց յանկարծ ըսաւ ինքնին. «Մի՛ գուցէ ուղտերուս ալ բան մը ըրած ըլլամ, վասն զի լսած եմ Ս. Գըրբէն թէ, ով որ հըլու կենդանեաց եւ անիրաւութիւն մը ըրած է, պատիժ պիտի առնուի » արդ, քանի որ անդէնի ուղեորի եմ, գուցէ

ուղտերուս ալ բան մը ըրած ըլլամ, զի մարդ եմ, սխալական եմ, ինչո՞ւ անոնցմէ ալ հէլալութիւն չ'առնեմ: » Այս մտածելէ յետոյ կը ջարժ ուղտերը եւ անոնց առջեւ ծռնիկ կը չոգի. «Ես անդէնի եմ ուղեոր, մնաք բարով ո՞վ իմ ուղտերս աղեոր, հէլալ արէք երթամ անդին, խաչին պատկուիմ, լուսով խաչին »:

Այն ատեն ուղտերուն ջոջը գլուխը կը տնկէ, — եւ ո՞ր ծառան գլուխը չի տնկեր երբ գիտնայ թէ իր տէրը մեռնելու վրայ է. — ու կը ձայնէ. «Երթաս բարով, վայելես անդէնը, մենք ի՞նչ ըսենք քեզ, կուշտ ու կուռ պահեցիր մեր փորը, բեռիկ ալ թեթեւ կը դնէիր մեր կրնակը, միայն թէ երբեմն ալ Մահը (այս միջոցին Մահն ալ Տատիկոնին հոգին առնել եկեր էր) որ իր բեռները մեր վրայ ալ կը դնէր, գուն ձայն չէիր հաներ, ատոր ալ բան մը ըսելիք չունինք, — զի ո՞վ Մահէն չէ վախցիր որ գուն չի վախնայիր —. բայց բան մը կայ, որուն համար չենք կրնար քեզ հէլալութիւն տալ. . . . : Գնա՛ ուրեմն Աստուծոյ ահաւոր դատաստանին տակ: Սա նայէ, մեզի պէս խոշոր, ահեղ եւ չքեղ կենդանիներուն փոխանակ առաջնորդ տալու արարական նժոյգ մը, վա՛յ մեր մեղքին, մեր կարգին ու շարքին, ո՞վ առաջնորդ դնէիր, ամա՛ն, լեղուս ալ յառաջ չերթար, գոնէ ըստելիք բա՛ն մը ըլլար »:

Տատիկոն զարհուրելով կը հարցնէ.

— Ըսէ՛ք, իմ պատուական ուղտերս, ըսէք ես ձեր ոտներուն հողը լղեմ, ո՞վ կարգեցի եւ առաջնորդ ձեր շարքին փառաւոր.

Այն ատեն բոլոր ուղտերը միաբերան կաղաղակեն.

— Է՛ջը, է՛ջը.

կենդանեաց ամենէ՛ն գէշը: »

Տատիկոն զայս լսելուն պէս, եւ, կըսէ, եւ հոգին կը փռէ: Իսկ Մահը որ զայս կը լսէ՝ ծիծաղելէն կը մարմարի ըսելով.

«Ի՞նչ յանցանք ունէր էջը՝

Երբ Տատիկոնն էր անխելբը,

Ի՞նչ անէր Տատիկոնը՝

Երբ ուղտերն էին անխելքը,
 Զի երբ նժոյգ լինէր առաջնորդը՝
 Դիւրաւ կը տանէր ուղտերուն հէքը
 Ընդիմ աշխարհքը: Դ

Բարոյական. — Երբ ուղտերուն ու-
 զածին պէս առաջնորդ կըլլայ արաբական ա-
 ռազընթաց նժոյգ մը, ուղտերը բեռին տակ
 չեն կրնար հետեիլ նժոյգի քայլերուն ու շըն-
 չասպառ կիշնան. — Մահուան ուզածն ալ
 այդ է. — այսպէս ժողովուրդ մը երբ արտա-
 քին տեսքերէ խաբուելով, իր վիճակին ու կա-
 րողութեանը չի համապատասխանող առաջ-
 նորդողներու ձեռքը կը յանձնէ ինքզինքը, կը
 մատնուի փորձանքի, — մահուան — յորմէ ա-
 զատեսցէ զմեզ Աստուած այժմ և միշտ եւ
 յաւիտեանս յաւիտեանից. ամէն: Ա.



Տգէտ տէրտէր մը, քանի մը գըպ-
 րոցական տղաքներ գլուխը հաւաքած,
 Իսրայէլացիներուն կարմիր ծովէն անց-
 նիլը ու եգիպտացիներուն ծովուն յա-
 տակը իջնելը բացատրելու համար կըսէ.
 — Ծովը սառած էր, երբ իսրայէ-
 լացիք անոր վրայէն անցան. ու հալե-
 ցաւ՝ երբոր եգիպտացիք անոր վրայ ե-
 լան:

Ուշիմ տղայ մը — Բայց տէրպապա,
 կարմիր ծովը՝ աշխարհացոյցին մէջ այ-
 րեցեալ գօտիին վրայ կը գտնուի, հոն
 չուրերը երբէք չեն կրնար սառիլ:

Տէրտէրը — Ծօ տղայ, պէտք է գիտ-
 նաս որ այն ատեն աշխարհացոյց չի
 կար... —

Հարոնիքի մը մէջ ճաշի ժամանակ,
 երկայնակեցութեան վրայ կը խօսէին.

— Մեր ընտանիքին մէջ, ըսաւ դո-
 քանչը, մինչև խոր ծերութեան կապ-
 րին. հայրս, որ զեղագործ մըն էր,
 հարիւրը անցնելէն ետքը մեռաւ.

Փեսան, ցաւելով. — Ահ, այդ բա-
 նը ինծի առաջուց ըսելու չէիք...

Երիտասարդ մը կը ներկայանայ վա-
 ճառականի մը, որ գրագրի մը պէտք
 ունէր, և անոր կաղաչէ որ զինքը այդ
 պաշտօնին կոչէ:

— Բայց կրնամ փոխահիլ, կը հար-
 ցընէ վաճառականը, ամեն օր 12—14
 ժամ գրասենեկին մէջ պիտի փակուիս:

— Հոգ չէ. կրնամ փակուիլ, կը
 պատասխանէ երիտասարդը անտարբե-
 րութեամբ, եօթը տարի բանտը անցու-
 ցած եմ...

Տօնիկ աղա, դատդ ինչ ըրիր,
 անցեալ օր կըսէիր թէ սրիկան քու 30
 նաբօլէտնդ մէջ խաղցուցեր է.

— Հա... անանկ է... մէջերնիս
 խնդիրը կարգադրեցինք. աղջիկս անոր
 տուի, առնելիք տալիք չի մնաց:

Փիլիսոփայ մը գեղեցիկ աղջիկ մը
 ունէր, որուն ձեռքը խնդրեցին ան-
 խելք մարդ մը և պարկեշտ մարդ. ան-
 խելքը բաւական հարուստ էր, իսկ պար-
 կեշտը աղքատ. փիլիսոփան իր աղջիկը
 պարկեշտին տուաւ, ըսելով. «Նախա-
 մեծար կը համարիմ այն մարդը որ հա-
 րըստութեան պէտք ունի, քան թէ հա-
 րըստութիւնը որ մարդու պէտք ունի:

Խայլի վագըրթտան պէրու պիրի-
 պիրլէրինի կէօրմէմիշօլան իքիահպապ-

լար պիր կիւն պիր մահալտէ թէսա-
տիւֆէն պուլուշուրլար :

— Օ՛. նասըլըն պագալըմ, պի-
րատէր .

— Օ գատար էյի տէյիլիմ հաճի
աղա, սիղի կէօրմէյէլի՝ չօգ շէյլէր կէչ-
տի պաշըմտան .

— Նէ՞ կիպի .

— Էն էվվէլ, էվլէնտիմ .

— Պու էյի շէյ .

— Օ գատար էյի տէյիլ . չիւնքիւ
մուսիպէթ պիր գարըյա տիւշտիւք .

— Վախ զավալլը . աճըտըմ, պու
ֆէնա շէյ . . .

— Օ գատար ֆէնա տէյիլ . չիւն-
քի 300 լիրա թրաքօմա ալտըմ .

— Նէ հալ իսէ . պու տա պիր թէ-
սէլի տիր . . .

— Անճագ նէ՛ ֆայտա , չօգ սիւր-
մէտի .

— Նիշի՞ն .

— Օ փարայըլա ֆ . . . քէօյիւնտէն
գօյուն ալտըմ . գարա պահթըմտան հէփ-
չիճիի տէ չիչէք հասթալըղընտան գը-
րըլտըլար :

— Ա՛, իշթէ պու չօգ աճընաճագ
պիր հալ տըր .

— Օ գատար աճընաճագ տէյիլ,
չիւնքիւ գօյունլարըն տէրիլէրինի սա-
թըպ՝ գարարըմը չըգարտըղտան սօնրա՝
էբէյիճէ տէ թիճարէթ էթտիմ :

— Նէ՛ մութլու սանա . պախտըն
եավէր իմիշ .

— Աճէլէ էթմէ . պիր կէճէ եարը-
սը էվիմիզ թութուշտու վէ օրատա սագ-
լամըշ օլտուլում թէքմիլ գազանճըմ
գայմէ քեաղըտլարը քիւլ օլտու կիթտի :

— Ա՛հ , պու նէ՛ պէօյիւք ֆէլաքէթ :

— Օ գատար պէօյիւք տէյիլ , չիւն-
քիւ էհլիմ տէ էվ իլէ պէրապէր եան-
տը . . . :

ի .

— Խայըր սահապլարը , ալիլէ պիր
սատագա վէրին .

— Ութա՛նմայօրմըսըն պէ՛, սէնտէ
ալիլիք նէ՞ կէզէր . կէօլէրին աբ ա-
չըգ , պէնտէն էյի կէօրիւսին .

— Պէնիմ իչին տէյիլ աղա , ալիլ
արգատաշըմ իչիւն սէօյլէյօրըմ . պու
կիւն պէրապէր տէյիլ տէ . . .

— Նէ՞րէտէ տիր եա՛ .

— Տիւյիւնիւ վար . պու կիւն էվ-
լէնիյօր . . . :

ԿԵԼ ԳԱՆԹԱՐԱ՝ . . .

(Շարունակութիւն)

Սիլիսդրէ

Սիլիսդրէի նաւամատոյցը ոտք կոխելուս
պէս , խանթարս յանձնեցի առտու իրիկուն
լուսարար , իսկ ցորեկները տնտես Պ. Սէրչօին .
շաղակրատ և կողշօս աչքով մարդ մը , որ
միշտ ձեռքիդ կը նայի թէ ի՞նչ պիտի վճա-
րես : «Արարատ» սրճարանին առջևը հազիւ
թէ գանթարը տեղաւորելով յոգնութիւն
պիտի առնէի , ահա զոյգ մը ուսուցիչներ թև
թևի մտած սրճարանէն դուրս կեկէին .

— Օ՛ . . . միւսիւ Տաքէսօֆ է գօմբա-
նի կիւլօֆ , հրամայեցէք նայիմ .

— Ատ ի՞նչ է .

— Խանթար է , նստեցէք որ կշռուիք .

— Բայց մենք կշռուելու պէտք մը չու-
նինք . մենք ամեն կերպով մեր վիճակէն գո՛հ
ենք շնորհիւ պատուարժան հոգաբարձու-
թեան , որ «օ՛ֆ» մը ըսել չի տար :

— Գոնէ Հոգաբարձուններն ալ ձեզմէ
գո՛հ են .

— Կատարելապէս . Հոգաբարձութեան
և ուսուցչական կաճառին մէջ համերաշխու-
թիւնը կը տիրէ :

— Հաւատարմիքս չի դար կոր .

— Ինչո՞ւ .

— Առաջին անգամ՝ կը տեսնեմ վարժա-
պետներ որ գո՛հ կըլլան իրենց հոգաբարձու-
ներէն .

— Այո՛, Պ. Բոթոթիկ. մենք գոհ ենք. և ասիկա մեզի պատիւ համարելով կըսենք:

— Նախանձէս բերնիս ջուրերը կը վազէ կոր. ո՛ւր էր թէ ես ալ Սիլիսդրէ վարժապետ ըլլայի . . . :

— Այո՛, մենք ազատ ենք հոս ուզած նուս պէս շարժելու, առանց մէկէ մը դիտողութիւն լսելու. վարժարանը մենք կը բանանք մենք կը գոցենք. ամսականնիս կանոնաւորապէս կանոններ ու «կեանք իմ աշնան» սղապ կըսենք. տղաքը շատ բան սորվեր են՝ չեն սորվեր, հոս ատանկ բանի կարեւորութիւն չի տրուիր, բաւական է որ «գըպ» բոցը գոց էր չըսուի, թէ և զպրոցը ծանձ մը չայցելիր:

— Հոգաբարձութիւնն ալ չայցելիր:

— Շիտակը կ'ուզե՞ս, շէնքով շնորհքով տարին անգամ մը. վարդանանցին օրը կ'այցելէ:

— Անշուշտ Սիլիսդրէցիներու բաղդէն կարգ մը վասակապաշտ ճառասանները ի կարգ հրաւիրելու համար: Ինչ որ է, նստեցէք որ կ'ըսուի:

— Նորէն սկսար, Պ. Բոթոթիկ:

— Այո, նստեցէք, անպատճառ պիտի կ'ըսեմ. եկէք նայիմ. (կը նստեցնէ) մի՛ ելիրաք. կը քաշեմ կոր. . . հարիւր բառասուն . . .

— Հէ՛. բայց մենք անցած տարի վառնայի մէջ այսչափ ծանր չեկանք:

— Կեցէք որ հաշիւնիդ տամ. . . 30 քիւօ վասակապաշտութեան, 15 քիւօ ալ անաստուածութեան համար, ասոնք միւսիւ Տաբէսօֆին տառաներն են. իսկ ձերը, ձայնաւոր աղա, կարգ մը ձայնաւոր արհեստակիցներու և նման 35 քիւօ կեղծաւորութեան, 20 քիւօ ալ մանիճիութեան և ազգամիջութեան, համագումար տառան կընէ 100 քիւօ, մնացեալն ալ կէսուակէս դուր էք. 10 նոցը տուէք տէ կանուխ մը տուններնիդ գացէք:

— Շնորհակալ ենք Պ. Բոթոթիկ:

— Է՛ ձանըմ՝ կէլ գանթարա . . . կէլ . . . վայ . . . տամնուլէ Շալճիէֆ, բոֆթից, ուսկից ուր. Տօպրիչէն հոս . . . տեսնու-

ի՛նք. գրաւ կը դնեմ թէ մագնիսականութիւն մը զձեզ հոս քաշած է:

— Այ գարշելի, ադ ուսկից գիտես:

— Ոչինչ է պիտոյ վասն բանիդ այդորիկ տալ քեզ պատասխանի: Այժմ՝ բաղմեցէք ի վերայ գանթարի:

— Ադ ի՛նչ փողոցային կշիռ է:

— 2ի հաւնեցա՞ր բարեկամս, կ'ուզես նէ ձեր խանութը գամ ու այն տեղի գանթարովը կ'ըսեմ:

— Բայց ի՛նչ ծանրութիւն ունիմ որ պիտի կ'ըսեմ:

— Եղբայր, 5—10 քիւօ ալ չես գար, նստէ նայիմ. (նստեցնելով) հա շէյլէ. (կըշռելով) տասներեք. . . ու տակաւին կըսես թէ ծանրութիւն չունիմ:

— Աղէկ ամա, այդչափ ալ թեթեւ կ'ուզեմ ըսել չուզեցի. մինակ ըղեղիս ծանրութիւնը քսան քիւօ կ'ուզայ:

— Ճշմարիտ է, ո՛ր պարծենկոտներ աւտանկ չըլլար. ու եթէ այս տասներեք քիւօն ալ հագուստի և պատածի տառա սեւ պենք, բու. ըսածիդ պէս շատ ծանրութիւն մը ունեցած չես ըլլար:

— Ինչ որ է, առէք սա օնոցը և մնաք բարով:

— Շնորհակալ ենք, միւսիւ, երթաք բարով:

— Պ. Բոթոթիկ, ժուռնալ տը Սարսընթըյին Սիլիսդրէի թղթակիցը կանցնի կոր, անիկա չե՞ս կ'ըսեր:

— Հարկ չի կայ, որովհետեւ անոր տառան ասկէ առաջ հեղ մը բէշիպոյնուղիններուն հետ առինք: Է՛ ձանըմ, կէլ գանթարա, կէլ գանթարա . . .

— Բոթոթիկ, նայէ՛, նայէ՛, սա կեդրոնի ծառին վրայ Զարէոս մը կայ:

— Այո, Զարէոս նահապետ, փութա՛, է՛ջ այտի և հրամայեա՛ ի գանթար, «հայրենիքեան յիշակօք» ձերովք:

(Շարունակելի)

ԱՄԱՌԱՅԻՆ ԹԱՏՐՈՆ ՊՈՌՏՈ

Հաճի Բանարոյի կից

1899 Յունիս 19 Շաբաթ գիշեր ժամ 9 1/2

Ա. ՌԻԻ ՊԼԱՍ միջատակութիւն 6 արար
Բ. Պարախաղ 1 արար.
Գ. Մարմնամարզ 1 "
Դ. ԵՐԴ 1 "
Ե. Շատախոս Սափրիչ Թուրքերէն լեզուաւ
զաւեշտ 2 արար:

Կը ծանուցուի որպէս Տասարակութեան
թէ այս տարի ալ Թատերական խումբը պիտի
տայ խիստ հետաքրքրաշարժ և զգալի
կարգ մը ներկայացումներ, որով հանգիստ-
կանք լաւ ժամանցներ պիտի ունենան: Ըն-
տանեաց հանգստութեան համար մասնաւոր
խնամք տարուած է:

Գիները դիւրամատչելի են:

Մ. Զ.

ԹՈԹՈՎԱՄՈՒՆՔ

Գողտրիկ բանաստեղծութեանց սոյն հա-
տորիկը կը վաճառուի ի գին 25 սանդիմ, Ա.
Զարպհանէլեանի գրատունը, Վառնա:

Ն Ե Ր Կ Ա Ր Ա Ր Ը

Կամ

ՄԵՂՔ և ԱՊԱՇԱԽ

Պոլսական կեանքէ քաղուած

Թատերախաղ 5 արար և 1 պատկեր.

Գրեց Տիրան Գ. Փափագիան

Գին 60 սանդիմ: Գիմել խմբագրութեան:



ԳՈՒՇԱԿ

Ա. Պ. Ա. Գ. Ա. Յ. Ի

Կամ Զուարճալի Բաղդադացի
Ընտանեկան

Երկսեռ ամէն հասակի ընթերցողաց ըզ-
բօսալի ժամանցներ տուող սոյն գիրքը կը
ծախուի մէկ ֆրանքի, լոյստարի ծախքով
գիմել խմբագրութեան:

ՄԵԾ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ՄՕՖԻԱ ԺԱՂԱՔԻ



ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԷՆ,
Երաշխաւորեալ

Ա. ՊԱՐԳԵԻՆ Է 500,000 ՖՐ. ՈՍԿԻ

50,000 տոմսեր հրապարակ հանուած
են, որոնց 25,000ը պիտի շահին հե-
տեւեալ կարգաւ.

1899 Յունիս	9ին	1500	Թիւեր.
" Յուլիս	7	1500	"
" Օգոստ.	4-5	2000	"
" Սեպտ.	3-4	"	"
" "	23-24	"	"
" Հոկտ.	13-3նոյ	16,000	"

ԳԻՆԵՐԻՆ ԵՆ ՈՍԿԻ ՖՐ.	Մէկ ութերկ.	Քաւորդ.	Կէ"	Ամբողջ
	1, 25 ֆ.	2, 50 ֆ.	5 ֆ.	10 ֆ.
	2	4	8	16
	2, 50	5	10	20
	3, 50	7	14	28
	3	6	12	24
	2, 15	4, 30	8, 60	17, 20
	14, 40	28, 80	57, 60	115, 20

Գինելու և մանրամասն տեղեկութեանց համար պէտք
է գիմել Սեղանաւոր Տիար ՄԱՐԳՐԻՍ ԳԱՐԻԲԷՆԷՆ,
միակ զրեաւոր գործակալ սոյն վիճակահանութեան,
Վառնա, Մուսալլա:

Շրջակայ քաղաքներէն եկած յանձ-
նարարութիւնք փութով կը կատարուին:
Ծ. Ա. կարգէն չի սկսող մը եթէ
Բ. Գ. Ե. կամ Զ. կարգերէն ուզէ, պար-
տաւոր է առջի կարգերուն փոխարէն
ալ վճարել:

Отговорникъ М. Скофовъ
Печантица Взаимность — "Варна."